ՀՐԱՆՏ ՊԵՏՐՈՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ



Երկարատև հիվանդությունից հետո կյանքի 64-րդ տարում վախճանվեց հանրապետության պետագրոարդի հողագիտության և ագրոքիմիայի գիտահետազոտական ինստիտուտի դիրեկտոր, ՍՄԿԿ անդամ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Հրանտ Պետրոսի Պետրոսյանը:

Հ. Պետրոսյանը ծնվել է 1923 թվականի դեկտեմբերի 27-ին, Երևան քաղաքում: 1941 թվականից մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Հայկական գյուղատնտեսական ինստիտուտն ավարտելուց հետո 1952 թվականից աշխատել է որպես Հայաստանի կոմկուսի Երևանի քաղկոմի կուսակցական բաժնի հրահանգիչ, այնուհետև՝ կուսակցության Կիրովյան շրջկոմի քարտուղար: 1956—1958 թթ. մանկավարժական աշխատանք է կատարել հայկական գյուղատնտեսական ինստիտուտում, եղել է ագրոնոմիական ֆակուլտետի դեկան: 1958 թվականից նա անփոփոխ եղել է հողագիտության և ագրոքիմիայի գիտահետազոտական ինստիտուտի դիրեկտոր:

Հ. Պետրոսյանը իր գիտական և կազմակերպչական գործունեությամբ ծանրակշիռ ավանդ է ներդրել հանրապետության աղուտների մելիորացման մեթոդների մշակման գործում: Նրա կատարած հետազոտությունների արդյունքներն ամփոփվել են ավելի քան 200 հրապարակումներում: Նա ոռոգովի աղուտների մելիորացման հարցերի ամեն տարի անցկացվող միջազգային դասընթացների գիտական ղեկավարն է եղել Հայաստանում, հայրենական մելիորատիվ գիտության նվաճումները բազմիցս ներկայացրել է Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի մի շարք երկրների կոնգրեսներում և կոնֆերանսներում:

Հ. Պետրոսյանը Չեխոսլովակիայի գյուղատնտեսության գիտատեխնիկական ընկերության, հանքային պարարտանյութերի միջազգային կենտրոնի Կենտկոմի պատվավոր անդամ էր, հողագետների միջազգային ընկերության աղուտների ենթահանձնաժողովի նախագահի տեղակալ:

Հ. Պետրոսյանն ակտիվորեն մասնակցել է հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին: Նա ընտրվել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի կազմում, հանրապետության Գերագույն սովետի դեպուտատ:

Կուսակցությունը և կառավարությունը բարձր են գնահատել Հ. Պետրոսյանի ծառայությունները: Նա պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, Ժողովուրդների բարեկամության, «Պատվո նշան» շքանշաններով, մեդալներով:

Հրանտ Պետրոսի Պետրոսյանի՝ կոմունիստի, գիտության տաղանդավոր կազմակերպչի, իր գործի նվիրյալի պայծառ հիշատակն ընդմիշտ կմնա մեր սրտերում:

Կ. Ս. Դեմիրճյան, Հ. Մ. Ոսկանյան, Ֆ. Տ. Սարգսյան, Թ. Ա. Դիլանյան, Վ. Մ. Մովսիսյան, Մ. Ս. Գրիգորյան, Ն. Կ. Այվազյան, Ս. Գ. Ղազարյան, Ռ. Գ. Թովմասյան, Ա. Վ. Նալբանդյան, Մ. Ա. Գյուլխասյան, Մ. Ս. Մելքոնյան, Վ. Ա. Ավագյան, Պ. Ռ. Արզումանյան, Ռ. Պ. Զոհրաբյան, Վ. Ա. Զորանյան, Ա. Ա. Մեժլումյան, Ս. Ե. Սաֆարյան, Ռ. Ա. Էդիլյան, Գ. Հ. Սահակյան

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ